

ԶԻՆԿԱԾ ՌԻԺԵՐԻ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՈՐՈՇ ԲԱՐՈՅԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐ*

Ն. Յ. ՄԿՐՏՉՅԱՆ, պահեստազորի գնդապետ, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի օպերատիվ արվեստի հետազոտությունների կենտրոնի գիտնական-վերլուծաբան



Ներածություն

Ժամանակակից զինված հակամարտությունների ժամանակ անգամ բարձրտեխնոլոգիական սպառազինության և ռազմական ուլորտ մուտք գործած տեխնիկական նորագույն միջոցների կիրառման պայմաններում բարոյահոգեբանական գործոնը շարունակում է կարևոր նշանակություն ունենալ: Զինծառայողներն իրենց մասնագիտական պարտականությունները կատարում են կյանքին սպառնացող վտանգի ու հոգեխոցիչ բազմաթիվ ներգործությունների պայմաններում: Եթե զինծառայողը մասնագիտական պատրաստման հետ մեկտեղ չի անցնում անհրաժեշտ հոգեբանական պատրաստում, ապա մարտական գործողությունների տեմպի ավելացմանը զուգահեռ մեծանում է անորոշությունը, տագնապայնությունը, հոգեկան լարվածությունը, որը բերելու է խուճապային տրամադրությունների առաջացմանը¹: Դեռ խաղաղ պայմաններում է անհրաժեշտ զինված ուժերի մարտական պատրաստման գործում բարոյահոգեբանական գործոնի համակողմանի հաշվառումը և ապագա հակամարտություններին զինվորական անձնակազմի հոգեբանորեն պատրաստումը², որոնք հնարավորություն են տալիս զինծառայողներին մարտական գործողությունների ժամանակ հաջողությամբ հաղթահարելու հոգեխոցիչ գործոնների ազդեցությունը: Մասնագետները փաստում են, որ անձնակազմի մասնագիտական պատրաստման արդյունավետության մակարդակը բարձր է, եթե պատրաստման ժամանակ չի թերագնահատվում «անձնային գործոնը» և պահպանված է մարտական պատրաստման մեթոդների ու զինծառայողների հոգեբանական հատկություններին ներկայացվող պահանջների

* Հոդվածն ստացվել է 26.02.2025: Հոդվածի գրախոսությունը ստացվել է 28.08.2025:

¹ Տես *С. Н. Семенкова. Необходимость психологической работы с военнослужащими в процессе военно-профессиональной деятельности. «Наука и современность», 2012* (<https://cyberleninka.ru/article/n/neobhodimost-psihologicheskoy-raboty-s-voennosluzhaschimi-v-protseesse-voenno-professionalnoy-deyatelnosti/viewer>); Ն. Ն. *Գոլովին*, Մարտի հետազոտություն. մարդու՝ որպես մարտիկի գործունեության և հատկությունների հետազոտություն: «ՀԲ», 1997, հմ. 3:

² Տես *Զ. Դ. Ասատրյան, Վ. Ս. Կարապետյան*, Զինվորական ստորաբաժանումներում զինծառայողների հոգեբանական պատրաստման ուղիներ: «ՀԲ», 2024, հմ. 4:

միջև առկա որոշակի համաչափություն³: Ուստի ստորև կփորձենք ուսումնասիրել այդ գործոններից, մեր կարծիքով, առավել կարևորները:

Բարոյահոգեբանական գործոնը զինված ուժերի անձնակազմի մարտական պատրաստման ժամանակ

«Մարտական պատրաստումը անձնակազմի զինվորական ուսումնավարժեցմանն ու դաստիարակությանը, ստորաբաժանումների, զորամասերի, զորամիավորումների ու դրանց կառավարման մարմինների լիաներդաշնակեցմանը նպատակաուղղված կազմակերպված գործընթաց է, որի նպատակն է ապահովել ըստ նախանշանակման մարտական խնդիրների կատարումը և մարտական գործողությունների հաջող վարումը»⁴:

Առաջավոր փորձը ցույց է տալիս, որ անձնակազմի մարտական պատրաստմամբ գործնական ունակությունների, մասնավորապես՝ հույզերի կառավարման և հմտությունների զարգացմանն ուղղված ուսումնական պարապմունքների համար զորավարժարաններում ստեղծվում են տարբեր հոգեբանական խոչընդոտների հաղթահարման գոտիներ և մոդելավորվում տարբեր մարտական իրադրություններ: «Մոդելավորվող մարտական իրադրությունում զինծառայողի հոգեկանի գործառնման ընթացքում դրսևորվող մի շարք օրինաչափությունների բացահայտումը հնարավորություն է տալիս կանխատեսելու ֆիզիկական, բարոյական և հոգեբանական փորձություններին արդյունավետ կերպով դիմակայելու նրա հոգեկան ներուժը, ռեալ կերպով օգտագործելու «մարդկային գործոնը»: Խոսքը վերաբերում է այն հոգեբանական գործոնների համախմբին, որոնց ինտեգրալային դրսևորմամբ պայմանավորված է զինծառայողի՝ իրադրությանը համարժեք հակազդումների կայունությունը և հուսալիությունը»⁵:

Մասնագիտական գրականության և միջազգային փորձի վերլուծությամբ մենք առանձնացրել ենք այն տեսակների պարապմունքները, որոնք առավել նպաստավոր են մեր առջև դրված խնդիրը լուծելու համար:

1. Տագնապի հայտարարմամբ անցկացվող պարապմունքներ (հանկարծակիության, ժամանակի սղության, գործողությունների տեսիլ ավելացման գործոնների համադրություն): Նպատակահարմար է հայտարարել «Տագնապ» զինծառայողների համար «անսովոր» ժամերին, ընթացքում ավելացնել նաև վտանգի զգացողության աստիճանը՝ նմանարկելով հարձակում գորանոցի, պահակակետի կամ ռազմական օբյեկտի վրա, պայթեփաթեթների պայթեցմամբ, անգնդակ փամփուշտներով կրակոցներով, տա-

³ Տես Վ. Հ. Մարգարյան, Մարտական գործունեության արդյունավետությունը պայմանավորող հոգեբանական գործոնների հարաբերակցության հարցի շուրջ: «ՀԲ», 2012, հմ. 1-2:

⁴ Տես Դ. Ս. Չիլինգարյան, Ե. Լ. Երզնկյան, Պաշտպանական-անվտանգային տերմինների բացատրական հայերեն-ռուսերեն-անգլերեն, ռուսերեն-հայերեն, անգլերեն-հայերեն մեծ բառարան: Ե., 2015, էջ 494:

⁵ Տես Վ. Հ. Մարգարյան, Նշ. աշխ.:

րածքը ծխապատելով և նմանարկելով անօդաչու թռչող ապարատների (ԱԹԱ) հարձակում:

2. Պայմանական հակառակորդի հարձակմանը ակտիվ հակազդման պարապմունք (հանկարծակիության, վտանգի, ժամանակի սղության, գործողությունների տեմպի ավելացման, անորոշության գործոնների համադրություն՝ աղմկային, ձայնային և լուսային էֆեկտների, ԱԹԱ-ների կիրառմամբ պայմանական հակառակորդի գրոհի նմանարկման, խրամատում ձեռնամարտի միջոցով): Վարժությունը կատարվում է ֆիզիկական ծանրաբեռնվածությունից հետո (երթարշավ USԿ-ից մինչև վարժադաշտ)⁶: Այստեղ կարելի է օգտագործել փեյնթբոլի* (անգլ.՝ *paintball*) հանդերձանք՝ «պայմանական հակառակորդի խոցումը» հավաստանշելու, յուրային անձնակազմի մասնագիտական վարպետության, ինքնավստահության աստիճանը բարձրացնելու նպատակով:

3. Վտանգի գործոնի մոդելավորմամբ կրակային պատրաստման գործնական վարժություններ: Օրինակ՝ փոխհրաձգության մոդելավորմամբ գրոհի կազմակերպումով (հրաձգության ժամանակ կարելի է թիրախները պատրաստել պայմանական հակառակորդի զինվորների տեսքով), մարտական նշանակների նետում, այդ թվում՝ գրոհի ժամանակ, տանկավախության հաղթահարում և զորէջքային տեղաշարժ տանկերի կամ ՀՄՄ-ների վրա, հաստիքային արկերով հրաձգություն ու մարտական հրաձգության պարապմունքներ գիշերային պայմաններում և այլն:

4. Մարտական հրաձգության մոդելավորմամբ մարտավարական զորավարժություններ (*անորոշության, հանկարծակիության, նոր իրավիճակների մոդելավորմամբ*): Օրինակ՝ անձնակազմի մեծ «կորուստների», աջակցող մարտական տեխնիկայի խափանումների հայտարարում, կրճատված կազմով առաջադրված մարտական խնդիրների կատարում, բարդ արգելքների հաղթահարման, զորավարժության միջոցով հրամանատարական կազմի հմտացում սահմանափակ կամ աղավաղված տեղեկույթի պայմաններում անձնակազմի կառավարման գործում: Դրան զուգահեռաբար կատարվում են պայմանական հակառակորդի դիվերսիոն խմբերի ներթափանցման նմանարկում, տեղանքում ստորաբաժանումների գործողությունների երկարատև դադարեցում և տեղաշարժվելու հանկարծակի հրամանի արձակում և այլն⁷:

5. Քանի որ ֆիզիկական պատրաստումը սերտորեն կապված է բարոյակամային և գաղափարադաստիարակչական պատրաստման հետ և ունի

⁶ Տես Մ. Ա. Կորչեմնիյ, *и др.* Военная психология: методология, теория, практика. М., 2010, с. 83 (<http://library.shsu.am/wp-content/uploads/2019/02/korchemniy.pdf>):

* Փեյնթբոլ – թիմային խաղ՝ ներկերով գնդակներ կրակող մարկերների օգտագործմամբ: Գնդակը, կաշեով արգելքին, «պայթում է» և այն ներկում: Գոյություն ունի փեյնթբոլի երկու հիմնական տեսակ՝ մարզական և մարտավարական:

⁷ Այդ մասին տես, օրինակ, А. Г. Караяни. Настольная книга военного психолога. М., 2023, с. 192:

կիրառական ուղղվածություն⁸, ֆիզիկական պատրաստման և մարզազանգվածային միջոցառումների ժամերին պարապմունքների անցկացում վճռականություն, խիզախություն ձևավորող մարզաձևերից (ամերիկյան ֆուտբոլ, ռեգբի, ծյուրո, կարատե, խառը մարտարվեստներ և այլն):

6. Հասարակական–պետական պատրաստման կամ տեղեկատվական, դաստիարակչական աշխատանքների ժամերին անձնակազմի համար ռազմաքաղաքական իրավիճակի, սանձազերծված պատերազմի (ռազմական գործողությունների, զինված հակամարտությունների) բնույթի, նպատակների, պատճառների պարզաբանում, հայրենի պետության զինված պաշտպանության անհրաժեշտության հիմնավորում, ժամանակակից մարտերի և պատմական նշանակություն ունեցող պատերազմների վերաբերյալ փաստավավերագրական և գեղարվեստական ֆիլմերի ցուցադրում:

Մարտական պայմաններում բարոյահոգեբանական գործոնների բացասական ազդեցության հաղթահարման հնարավոր ուղիներ

Ժամանակակից մարտական գործողությունները բնութագրվում են առաջադրված խնդիրները կատարելուն և նպատակներին հասնելուն խոչընդոտող մի շարք բարոյահոգեբանական գործոնների ազդեցությամբ:

Մարտական իրավիճակում առավել ակտիվորեն են դրսևորվում այնպիսի բացասական գործոններ, ինչպիսիք են՝ անձնակազմի շրջանում կյանքին սպառնացող վտանգի և անօգնականության զգացողությունը («մահվան դատապարտվածի» հոգեբանության ձևավորում), հանկարծակիությունը, անորոշությունը, իրավիճակի դինամիկ փոփոխությունները և կրակի ինտենսիվությունը, ժամանակի և ռեսուրսների սղությունը, քնի ռեժիմի խանգարումը, հոգնածությունը, անձնակազմի շրջանում անպատժելիության (ամենաթողության) մթնոլորտի ձևավորումը, զորքերի գործողությունները գիշերային ժամերին, վատ եղանակային պայմաններում, տեղեկույթի անբավարարության դեպքում և այլն⁷:

Այդ գործոնները հատկապես պատշաճ պատրաստում չանցած զինծառայողների մեջ առաջացնում են տազնապայնության, անհանգստության, անվստահության, լարվածության, հոգնածության, վախի, իսկ երբեմն նաև հուսահատության և այլ բացասական զգացումներ, որոնք նվազեցնում են ստորաբաժանումների՝ մարտական առաջադրանքներ կատարելու արդյունավետության մակարդակը⁹:

⁸ Տես Ա. Ե. *Դավթյան*, ֆիզիկական պատրաստությունը և Հայաստանի Հանրապետության Զինված ուժերում դրա ապահովման որոշ խնդիրներ: «ՀԲ», 2018, հմ. 1- 2:

* Պատերազմի ժամանակ զինվորականի հոգեկանի վրա ազդող գործոնները բազմաթիվ են, ուստի սույն հոդվածում մենք ներկայացնում ենք այն գործոնները, որոնք, ըստ պատերազմի մեր փորձի, կարող են էական ազդեցություն ունենալ ՀՀ ԶՈՒ-ի անձնակազմի վրա:

⁹ Տես, օրինակ, *А. С. Сафонов*. Психогенные факторы боевой обстановки.

Մասնագիտական գրականության մեջ ներկայացված են բազմաթիվ ուսումնասիրություններ, որտեղ նկարագրվում են մարտական գործողությունների ժամանակ այդ բացասական գործոնների ազդեցության կանխարգելման և հաղթահարման սոցիալ-հոգեբանական ուղիները: Ներկայացնենք դրանցից մի քանիսը:

Ինչպես հայտնի է, մարդու ուժերի պաշարը պայմանավորված է նրա աշխատունակությամբ: Արդեն 2-3 ժամ շատ լարված աշխատանքից հետո աճող *հոգնածությունը* ազդում է կատարվող գործողությունների որակի վրա: Ուստի հոգնածության *հետևանքների կանխարգելման համար* հանձնարարվում է.

- մինչև վճռական իրադարձությունները հաշվենկատորեն կազմակերպել զինվորական առօրյան՝ ենթակա անձնակազմի ուժերը խնայելու համար,
- հստակեցնել առաջնահերթ խնդիրները և անձնակազմի հիմնական ուժերը չվատնել ոչ նպատակային գործողությունների վրա,
- մարտական գործողություններում դադարներն օգտագործել անձնակազմի հանգստի կազմակերպման և ուժերի վերականգնման համար:

Հոգնածության պատճառներից մեկը ոչ բավարար քունն է: Այսպես. մեկ օր անքուն մնալուց հետո կտրուկ կերպով անկում է ապրում մարդու մտավոր գործունեությունը, երկու օրից հետո որոշումներ ընդունելիս հնարավոր են կոպիտ սխալներ, իմպուլսիվ գործողություններ, երեք օր անքնությունից հետո մարդը կորցնում է գիտակցությունը¹⁰:

Ա. Կարայանին նշում է, որ չինացի, ռուսաստանցի, իսրայելցի ռազմական հոգեբանների ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ռազմական գործողություններին անմիջականորեն մասնակցող զինծառայողներին անհրաժեշտ է օրական առնվազն չորս ժամվա անընդհատ քուն: Իսկ ահա այն զինծառայողները, որոնց գործունեությունը կապված է մտավոր լարվածության, մարտական որոշումների ընդունման և օպերատիվ ապահովման հետ, օրվա ընթացքում պետք է քնեն առնվազն վեց ժամ, քանի որ մտավոր աշխատունակությունը ավելի ուշ է վերականգնվում, քան ֆիզիկականը: Սակայն կենսագործունեության նման ռեժիմը չի կարող շարունակվել ավելի քան 5-6 օր¹¹:

Պատերազմների փորձը ցույց է տալիս, որ անձնակազմի ֆիզիկական և բարոյական ուժերի վերականգնման, հոգեբանական վիճակի նորմալացման

«Научный Лидер», Март 2025 № 11 (212) (<https://scilead.ru/public-journal/212>); “FM 3-21.8 (FM 7-8). The Infantry Rifle Platoon and Squad”. Headquarters, Department of the Army Washington, DC, 28 March 2007, P. 1-10 (https://www.marines.mil/Portals/1/Publications/FM%203-21.8%20%20The%20Infantry%20Rifle%20Platoon%20and%20Squad_1.pdf):

¹⁰ Сту М. Ю. Зеленков. Морально-психологическое обеспечение деятельности войск, воинских формирований и органов. М., 2024, с. 414:

¹¹ Сту А. Г. Караяни. Настольная книга военного психолога, с. 51:

միջոցառումներից մեկը կարող է լինել ստորաբաժանումների պատեհաժամ փոխարինումը և ժամանակավոր դուրսբերումը ռազմական գործողությունների գոտուց՝ հանգստանալու և լրահամալրվելու, ինչպես նաև իրենց սոցիալ-իրավական խնդիրները լուծելու համար զինծառայողներին արձակուրդ տրամադրելը:

Օրինակ՝ 2-րդ համաշխարհային պատերազմի տարիներին բրիտանացի զինվորները 12 օր մարտական գործողություններին մասնակցելուց հետո ստանում էին 4-օրյա արձակուրդ, ինչը նրանց հնարավորություն էր տալիս հաջողությամբ հաղթահարելու վախի զգացումը և պահպանելու մարտունակությունը մինչև 400 օր¹²: Նման աշխատակարգը նաև նպաստում է զինծառայողների հոգեկանի վրա մարտական գործողությունների բազմաթիվ այլ հոգեխոցիչ գործոնների բացասական ազդեցության հաղթահարմանը: Վախի արդյունավետ կանխարգելման համար անհրաժեշտ է նաև չեզոքացնել մարտական պայմաններում դրա առաջացման երեք հիմնական գործոնների՝ *անորոշության, հանկարծակիության և անօգնականության զգացողության ազդեցությունը*¹³: Ընդ որում, այդ գործոնների դեմ անհրաժեշտ է պայքարել դեռ խաղաղ պայմաններում՝ անձնակազմի մարտական պատրաստման ժամանակ:

Հրամանատարությունը պետք է հետևողական լինի հոգեբանական գործոններից մեկի՝ հատկապես մարտական գործողությունների ժամանակ անձնակազմի *անպատժելիության մթնոլորտի* բացասական ազդեցության դեմ պայքար մղելու գործում¹⁴:

Զինվորական կարգապահության ամրապնդման, հոգեբանական գործոնների բացասական ազդեցության արդյունավետ կանխարգելման համար կարևոր է ծառայության ընթացքում լավը, դրականը բարձրաձայնելու և ընդօրինակումը խրախուսելու մեթոդների կիրառումը¹⁵:

Ամփոփում

Ինչպես խաղաղ պայմաններում, այնպես էլ մարտական գործողությունների ժամանակ բարոյահոգեբանական գործոնների բացասական ազդեցության նկատմամբ անձնակազմի հոգեբանական կայունությունը պահպանելու համար անհրաժեշտ է ուշադրություն դարձնել հետևյալ հարցերին.

- Ø զինված ուժերի մարտական պատրաստման պարապմունքներում բարոյահոգեբանական գործոնի մշտական կարևորումը,

¹² Տես *A. Г. Караяни*. Психологическая феноменология страха в бою. «Психология страха». Материалы межрегиональной научно-практической конференции психологов силовых структур. М., 2014, с. 63 (<https://www.klex.ru/fck>):

¹³ Տես նույն տեղում, էջ 61:

¹⁴ Տես *Yuri E. Fedorov*. Russian Military Manpower After Two and a Half Years of War in Ukraine, 25.11.2024 (<https://www.ifri.org/en/studies/russian-military-manpower-after-two-and-half-years-war-ukraine>):

¹⁵ Տես, օրինակ, «Военная психология. Концепты, направления и интервенции». Под ред. Н. Махешвари, В. Кумара. Харьков, 2022, сс. 204- 232):

- Ø օպերացիաների (մարտական գործողությունների) վարման շրջանում զինված ուժերի բարոյահոգեբանական վիճակի և ապահովվածության, հոգեծին կորուստների, դրանց վերլուծության, եզրակացությունների պատրաստման ու հրամանատարին, կառավարման վերադաս մարմնին զեկուցման համար տվյալների անընդհատ հավաքումը և ընդհանրացումը,
- Ø պայմանական հակառակորդի բացասական տեղեկութահոգեբանական ազդեցությունից զորքերի հուսալի և կայուն պաշտպանությունը,
- Ø հոգեկան խեղումներով զինծառայողների արագ հայտնաբերումը և նրանց հետ համապատասխան վերականգնողական աշխատանքների կազմակերպումը:

ВОЕННАЯ ПСИХОЛОГИЯ И ВОСПИТАНИЕ

НЕКОТОРЫЕ МОРАЛЬНО-ПСИХОЛОГИЧЕСКИЕ ФАКТОРЫ ПОДГОТОВКИ ЛИЧНОГО СОСТАВА ВООРУЖЕННЫХ СИЛ

*Н. Я. МКРТЧЯН, полковник запаса, ученый-аналитик Центра исследований
оперативного искусства НИУО МО РА*

РЕЗЮМЕ

Мировой опыт применения войск в различных условиях обстановки свидетельствует о том, что морально-психологическое состояние личного состава было и остаётся одним из главных и решающих факторов достижения победы, определяя готовность личного состава к успешному выполнению боевых задач при любых обстоятельствах. Следовательно, еще в мирных условиях в процессе боевой подготовки необходимо всесторонне учитывать морально-психологический фактор и осуществлять эффективную психологическую подготовку личного состава.

В процессе военно-профессиональной деятельности военнослужащие постоянно подвергаются воздействию различных психологических факторов: опасности, новизны, неизвестности, внезапности, дефицита времени, усталости, тревожности, повышенного темпа действий, психического напряжения. Эффективность реализации поставленных задач будет зависеть, прежде всего, от того, насколько они будут готовы к преодолению негативного воздействия этих факторов.

MILITARY PSYCHOLOGY AND EDUCATION

**SOME MORAL AND PSYCHOLOGICAL FACTORS
IN THE TRAINING OF THE ARMED FORCES PERSONNEL**

N. Ya. MKRTCHYAN, Colonel (Res.), Research Fellow, Center for Research on Operational Art, NDRU, MOD, RA

SUMMARY

World experience in the employment of forces in various conditions indicates that the moral and psychological state of personnel has been and remains one of the main and decisive factors in achieving victory, thus determining the readiness of personnel to successfully perform battle tasks under any circumstances. Consequently, even in conditions of peace, in the process of combat training it is necessary to comprehensively take into account the moral and psychological factor, and implement effective psychological training of personnel.

In the process of military-professional activities, military personnel are constantly exposed to the impact of various psychological factors: danger, novelty, uncertainty, surprise, lack of time, fatigue, anxiety, increased pace of actions, psychic tension. The effectiveness of the implementation of the assigned tasks will depend, first of all, on how ready they are to overcome the negative impact of these factors.